

այդ միութիւնը մեր ժողովուրդին, «Քորոնա» ախտի թաթին ներքեւ, հաղորդ իրարու ցաւին ու կարիքներուն, հոգեխառնուած ու միաձոյլ, միասին տանելու վիշտն ու տառապանքը, որ բոլորիս հաւասար բաժին կը դառնար այսպէս: Ու անտարակոյս այդ սուրբ զգացումին երաշխիքով է, որ անգամ մը եւս մեր վրայ կը կարկառուի Աստուծոյ նախախնամող Աջը, որպէսզի «Քորոնա» շարիքին ժանիքները խորտակուին, առանց հասնելու մեր հոգիին ու մարմնին եւ անոնցմով պայմանաւոր արժէքներուն:

Աղէտը վերջ չէ գտած սակայն ու կը շարունակուի նոյն թափով: Կեանքն ու շարժումը դադրած է ամենուրեք: Մեր ժողովուրդը կը շարունակէ տակաւին մնալ վանքին պարիսպներէն ներս, անգործ ու լքուած, սպասելով լաւագոյն օրերու խոստումին՝ սպառելու սարսափին ու մղձաւանջին մէջ իր քանի մը լուծանքներով:

Տագնապի առջեւ է կանգնած նոյնպէս Սուրբ Աթոռը: Քորոնա կոշուող աղէտը զրրկած է զինք ամիսներէ ի վեր, կալուածական եւ եկամտային իր բոլոր միջոցներէ, եւ ինչ որ կը մնայ մեր տրամադրութեան տակ, համեստ ապրուստի մը միջոցն է լոկ: Սակայն Պատրիարքութիւնս տնտեսական այս դժնդակ կացութեան մը ընդմէջէն, պիտի շարունակէ իր կեանքը, մինչեւ որ դարձեալ ծագի Աստուծոյ բարութեան եւ խաղաղութեան արեւը Սուրբ Երկրին եւ յատկապէս Հայոց Վանքին վրայ:

ԽՈՐՀՈՒՐԴ ԵՒ ԽՕՍՔ

Ժամանակը առիթ կու տայ մեզի դրամ շահելու, իսկ դրամը՝ ժամանակ վատնելու:

Ժամանակը սպաննելու հազար ձեւ կայ, բայց յարութիւն տալու ոչ մէկ միջոց:

Կեանքը մեծ վաճառատուն մըն է, ուր ամէն ինչ կը գտնես բացի փնտռածէդ:

Անկեղծ եւ իրա՛ւ բարեկամութիւնը մարդկային կեանքի ամենէն շքեղ եւ ամենաթանկագին հարստութիւններէն մին է:

Արմ Լալա Մահարի

Կեանքի նպատակը կատարելալին հասնելու յոյսը չէ, այլ միշտ լաւագոյնին ձրգտելու կամքը:

Միայն անոնք կը ձանձրանան կեանքէն, որոնք չեն ճանչնար արուեստի գեղեցկութիւնը: Կեանքը առանց արուեստի՝ միջակ հոգիները միայն կրնայ գոհացնել:

Չկայ աւելի ուժեղ կախարդանք, քան բառերու կախարդանքը: